ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2011. Т. LXIV, № 4.

ՄԻՀՐԱՆ ՍՏԱԿՅԱՆ

(ծննդյան 70-ամյակի կապակցությամբ)

Լրացավ տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ճարտարագիտական և Ուկրաինայի տրանսպորտային ակադեմիաների իսկական անդամ և Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի (ք. Մոսկվա) թղթակից անդամ **Միհրան Գրիգորի Ստակյանի** ծննդյան **70-ամյակը**:

Նրա ողջ գործունեությունն անխզելիորեն կապված է Պոլիտեխնիկականի հետ, ուր նա 1957թ. ընդունվել է մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետ և 1962թ. ավարտելուց հետո մինչ այժմ անընդմեջ աշխատում է մեքենագիտության ամբիոնում, անցնելով գիտամանկավարժական գործունեության բոլոր փուլերը՝ ասիստենտից մինչև ամբիոնի վարիչ և պրոֆեսոր: 1968թ. Օդեսայի պոլիտեխնիկական ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական, իսկ 1997թ. ՀՊՃՀ-ում՝ դոկտորական ատենախոսություններ:

Այդ տարիներին նա ձևավորվել է որպես մանկավարժ և հետազոտող, դասավանդել մեքենագիտության բնագավառի մի շարք դասընթացներ և դարձել առաջատար դասախոս մեքենաների նախագծման հիմունքների գծով, զբաղվել է մեթոդական աշխատանքներով և հրատարակել 27 անուն ձեռնարկներ, որի համար դեռևս 1980թ. ընդգրկվել էր ԽՍՀՄ բարձրագույն կրթության մինիստրության մեխանիկայի և մեքենագիտության գիտամեթոդական հանձնաժողովի կազմում:

Նա իր ավանդն է ներդրել հանրապետության ճարտարագիտական կադրերի, մասնավորապես՝ ճարտարագետ մեխանիկների պատրաստման գործում: 1992–98թթ. գլխավորել է ՀՊՃՀ ուսումնամեթոդական վարչությունը և մասնակցել հանրապետության բարձրագույն կրթության համակարգի վերափոխման, միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, բազմաստիճան կրթական համակարգ

ստեղծելու և ուսումնական գործընթացում նոր կրթական տեխնոլոգիաներ ներդնելու աշխատանքներին։

1998–2000թթ. Մ. Ստակյանը աշխատել է ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալի պաշտոնում՝ համակարգելով միջին մասնագիտական, բարձրագույն կրթության և գիտության ոլորտների կազմակերպական աշխատանքները։ Նրա գլխավորությամբ և անմիջական մասնակցությամբ ստեղծվել և ներդրվել են մի շարք կանոնադրական-նորմատիվ փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են ուսումնական գործընթացի, բուհերի և քոլեջների ստորաբաժանումների գործունեության կազմակերպման, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման խնդիրները։

Ակտիվ մասնակցել է «ՀՀ կրթության մասին», «ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների մշակման և ընդունման գործընթացներին։ 1998-2002 թթ. եղել է ԱՊՀ անդամակից երկրների Միջխորհրդարանական Համաժողովի Կրթության խորհրդի կրթական ստանդարտների հանձնաժողովի փոխնախագահը։ Միջկառավարական հանձնաժողովների կազմում մասնակցել է ՀՀ-ի և 7 երկրների հետ կրթության և գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ 14 համաձայնագրերի մշակման և ընդունման, ինչպես նաև ԱՊՀ անդամակից երկրների միասնական կրթական և գիտատեխնոլոգիական տարածք ստեղծելու կանոնադրական աշխատանքներին։

Դեռևս 70-ական թվականներին նա ԵրՊԻ մեքենաների մասերի ամբիոնում հիմնել է հոգնածային փորձարկումների լաբորատորիա և ղեկավարում է հետազոտական խումբ, որի կազմում ընդգրկված են դասախոսներ, ասպիրանտներ և մագիստրանտներ։

Նրա հետազոտական գործունեությանը բնորոշ է առաջադրվող խնդիրների լուծման համալիր մոտեցումը՝ խնդրի հիմնավորումը, դրա ֆիզիկական և մաթեմատիկական մոդելների մշակումը, գիտափորձի մեթոդաբանության ստեղծումը և իրականացումը, փորձարարական տեխնիկայի, չափիչ-ստուգիչ սարքերի նախագծումը և կատարելագործումը, մաթ.վիճակագրության ժամանակակից մեթոդներով փորձի արդյունքների մշակումը, խնդրի ծրագրային ապահովումը, կոնստրուկտորական գործունեությունում և արտադրությունում առաջադրվող հաշվարկային մեթոդների և տեխնոլոգիական գործընթացների ներդրումը։ Մ. Ստակյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ հարցերը՝ ծայրահեղ պայմաններում (փոփոխական բարդ լարվածային վիճակ, կոռոզիոն միջավայր, ջերմային և լազերային ճառագայթման ազդեցություն) աշխատող հանգույցների և մեքենամասերի հոգնածային դիմադրության և ճաքակայունության հաշվարկային մեթոդների մշակում, հոգնածային լավարկված գիտափորձի մեթոդաբանության ստեղծում, ճաքագոյացման և ճաքազարգացման մեխանիզմների

ուսումնասիրում, հոգնածային փորձարկումների և ճաքերի ուսումնասիրման համար անհրաժեշտ սարքավորման նախագծում, գիտափորձի մաթեմատիկական և ծրագրային ապահովում, նոր տեխնոլոգիական գործընթացների մշակում, որոնց արդյունքով, շնորհիվ հաշվարկների ճշտման և մշակվող կառուցվածքների ամրության և երկարակեցության ողջ գոյապաշարի օգտագործման, կարելի է հասնել մեքենաշինական արտադրանքի և տրանսպորտային միջոցների նյութատարության նվազեցման:

Մ. Ստակյանի հետազոտական խումբը մեր հանրապետության, ինչպես նաև ՌԴ-ի, Ուկրաինայի և Բելառուսի հետազոտական կենտրոնների, բուհերի և ձեռնարկությունների հետ համատեղ 1975–91թթ. իրականացրել է գիտատեխնիկական համագործակցության տասնյակ ծրագրեր, որոնց արդյունքներով էլեկտրամեքենաշինության, գյուղատնտեսական մեքենաների և տրանսպորտային միջոցների արտադրություններում ստացվել է որոշակի տնտեսական արդյունավետություն, առաջադրվել են նոր հաշվարկային մեթոդներ և տեխնոլոգիական գործընթացներ: Եվրոպական համագործակցության հետազոտական ծրագրերի շրջանակներում 1994–96թթ. գործուղվել է Աթենքի ազգային տեխնիկական համալսարան, Լոնդոնի Բրյունելի և Բելֆաստի Թագուհու համալսարաններ: Իր հետազոտությունների արդյունքները զեկուցել է 36 տարբեր գիտաժողովներում և հրատարակել է շուրջ 210 գիտական աշխատություններ, արժանացել ՀՀ-ում և ՌԴ-ում հաստատագրված 11 արտոնագրերի և մշակել 4 ստանդարտ հաշվողական ծրագրեր: Հրատարակել է գիտափորձի արդյունքների վիճակագրական մշակման և մեքենաների հուսալիության հաշվարկների վերաբերյալ երկու աշխատություն (20 տպ.մ.), կազմակերպել է 16 ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունները, իրականացրել 4 դոկտորական ատենախոսությունների խորհրդատվություն, այժմ էլ ղեկավարում է ՀՊՃՀ ասպիրանտների և մագիստրանտների գիտական աշխատանքները, նրանց համար իրականացնում հետազոտական հատուկ դասընթացներ:

1977 թվականից նա համագործակցում է ՀՀ ԳԱԱ ֆիզ.–տեխ. բաժանմունքի աշխատանքներին որպես մեքենաշինության սեկցիայի խորհրդի և «ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ տեղեկագիր, տեխն. գիտ. սերիա» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ: Ակտիվ մասնակցում է Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի (ՀՃԱ) մեքենաշինության և մետաղագործության բաժանմունքի աշխատանքներին: Նրա անմիջական մասնակցությամբ 2004թ. ստեղծվել է «ՀՃԱ Լրաբեր» հանդեսը, որի գլխավոր խմբագրի տեղակալն է:

Նա ՀՀ մեխանիկայի և մեքենաշինության գիտատեխնիկական ընկերակցության գիտատեխնիկական և գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների

անդամ է և մեծ ճանաչում ունի իր բնագավառի գիտնականների, հետազոտողների և ճարտարագետների շրջանում։

TEMPUS-TACIS միջազգային գիտակրթական ծրագրերի գծով 1998–2000թթ. ՀՀ ազգային կոորդինատորն էր և իր ավանդն ունի եվրոպական ծրագրերին հանրապետության գիտակրթական հիմնարկների և կազմակերպությունների մասնակցությունն ակտիվացնելու և համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու կարևոր գործում։ Նույն համագործակցության շրջանակներում նրա գլխավորությամբ ավարտվել են «ԿԳ նախարարություն - բուհեր» տեղեկատվական-կառավարման համակարգչային ցանցի ձևավորման աշխատանքները (EDAR- 97 ծրագիրը՝ 600 000 ԱՄՆ դոլար ծավալով)։

Պրոֆ. Մ. Ստակյանը ընդգծված բարյացակամ վերաբերմունք ունի իր գործընկերների և ճարտարագիտական բնագավառի մասնագետների նկատմամբ, առաջին իսկ հնարավորության դեպքում պատրաստ է աջակցելու նրանց գիտա-մեթոդական աշխատանքներում՝ միշտ պահպանելով հետազոտական էթիկայի նորմերը։ Օգտվելով գիտափորձի կազմակերպման և իրականացման իր զգալի փորձառությունից, ինչպես նաև բազմամյա խմբագրական գործունեությունից՝ հատկապես զգայուն է երիտասարդ գիտաշխատողների նկատմամբ, որոնց միշտ օգնել է հետազոտություններ կատարելու և դրանց արդյունքները ձևակերպելու կարևոր փուլում։ Օժտված լինելով ճարտարագիտական լայն մտահորիզոնով և միշտ հետևելով իր և հարակից ոլորտների նորույթներին՝ նա կարողանում է ճիշտ կողմնորոշվել և ծագած հիմնախնդիրների նկատմամբ լավարկային լուծման տարբերակներ առաջադրել։ Այդ իսկ պատճառով բնագավառի մասնագետները հաճույքով են նրան դիմում և միշտ ստանում սպառիչ խորհրդատվություն։

Պրոֆ. Մ. Ստակյանը իր 70-ամյակն է թևակոխում ստեղծագործական վերելքի պայմաններում և երիտասարդական ավյունով շարունակում ղեկավարել իր հետազոտական խմբի աշխատանքները՝ դրանում ներգրավելով նորանոր երիտասարդ գիտաշխատողների։

Խմբագրական կոլեգիան շնորհավորում է Միհրան Գրիգորի Ստակյանին հոբելյանի կապակցությամբ, ցանկանում քաջառողջություն, երկարակեցություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ։